

Երբ մենք դու տկար էինք,
յարմար ժամանակին Բրիտան
ամբարշտներուն համար մե-
ռան : Հոռվմ. Ե 6 :
Մեղքին վարձքը մահ է :
Հոռվմ. Զ. 23 :
Մեր դատումը այս է որ եթէ
մէկը ամենուն համար մեռաւ,
ուրեմն ամէնն ալ մեռան :
Բ. Կորնթ. Ե. 14 :

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵՒՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ
ԱՄԵՆՈՒՆ ՀՍՄԱՐ

Ես ան եմ որ մեռայ, եւ ա-
հա կենդանի եմ յապետեմ
յապետեմ : Յայտ. Ա. 18 :
Մահը յաղթութեան մէջ ըն-
կրկնացաւ : Ա. Կորնթ. Ժ. 54 :
Ես եմ յարութիւնը եւ կեան-
քը, ան որ ինծի կը հաւատայ,
Թէեւ մեռնի՝ պիտի ապրի :
Յովհ. Ժ. 25 :

“ PANPÈRE ” REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE
Բաժնեգին տարեկան.—Յրանսա եւ Սուրիա 5 Յր. Պալքանեան երկիրներ 1 շիւ ուրիշ երկիրներ 1,50 ճիւ
Rédacteur H. N. Ghazarossian, 29, Rue Fauchier — Marseille (France)

Թիի 2

Գ. ՏԱՐԻ

21 ԱՊՐԻԼ 1927

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՀԸ

Վեր. Ա. 2. Եղոյեան
.....

«Ես ալ երբ երկրէ բարձրանամ,
ամէնն ալ ինծի պիտի քաշեմ : (Յի-
սուս) աս բանը կը զբուցէր՝ իմացնե-
լով թէ ի՞նչ կերպ մահով պիտի
մեռնէր»։ Յովհ. ԺԲ. 32, 33 :

Չատիկի առիթով «Բանբեր»-ի ընթերցողներն անշուշտ
կ'անկալեն անոր մէջ գտնել յօդուածներ Տէր Յիսուս
Քրիստոսի մահուան վրայով : Ասոր համար ես ալ օգտա-
կար համարեցի գրել : Տէրը օրհնէ :

Իմացնելու համար Թէ ինք ի՞նչ կերպ ՄԱՀՈՎ պի-
տի մեռնէր, մեր Տէրը կ'ըսէ.— «Ես ալ երբ երկրէ բարձ-
րանամ, ամէնն ալ ինծի պիտի քաշեմ» :

«Երբ երկրէ բարձրանամ».— Ի՞նչը ըսել է այս : Յա-
ջորդ համարը կուտայ մեզի սրտաւսմանը, Թէ Տէր Յի-
սուս կ'ուզէ մեզի հասկցնել Թէ «Ի՞նչ կերպ ՄԱՀՈՎ
պիտի մեռնէր» : Ան պիտի մեռնէր, բայց երկրէ բարձ-
րացած պիտի մեռնէր, ԽԱՉԱՓԱՅՏԻՆ ՎՐԱՅ. (Գործ. Ե.
30 : Ժ. 39 : ԺԳ. 29 : Գաղ. Գ. 13 : Ա. Պետ. Բ. 24) : Ահա
ա՛յսպէս մեռաւ. Ան, եւ Փրկիչ եղաւ. ԽԱՉԱՓՎԸ, եւ կոչուե-
ցաւ. «ԽԱՉԵԱՆ» :

Նիկիոյի մասին հետ խօսած ատեն Ան արդէն ըսած էր.
«Ինչպէս Մովսէս անաստիքին մէջ օճը բարձրացուց, ա-
նանկ ալ պէտք է որ Որդին Մարդոյ բարձրանայ, որ
ամէն ով որ Անոր հաւատայ չկորսուի, հապա յապետեմա-
կան կեանք ունենայ» (Յովհ. Գ. 14, 15) :

«Պէտք է որ բարձրանայ» : Յիսուս Քրիստոսի մեռ-
նիւն «Պէտք էր», բայց «ԽԱՉԻՆ մահովը» մեռնելու էր
(Փիլ. Բ. 8) : Անիկա խաղաղութիւն ըրաւ. Աստուծոյ եւ
մեր մէջտեղ «ԽԱՉԻՆ արիւնով» (Կող. Ա. 20) : Անոնք որ
այսպէս ընդունած չեն, եւ այսպէս չեն քարոզեր, «Խա-
չին թշնամիներն» են կ'ըսէ Պողոս. (Փիլ. Գ. 18) :

Շատ ուշագրաւ. խօսք մըն է Յովհ. Բ. 28 ը— «Երբ
Որդին Մարդոյ բարձրացնէք, (չէ Թէ մեռնէք կամ
սպաննէք, զի զայս կրնային ընել շատ կերպերով, ինչ-

պէս ապաւածէն վար ձգելով (Ղուկ. Գ. 29), կամ քար-
կոծելով (Յովհ. Բ. 59 : Ժ. 31), եւ այլն. հապա «Երբ բար-
ձրացնէք», ան ատեն պիտի գիտնաք Թէ ես եմ» : Հրէա-
ները Յիսուս Քրիստոսի խաչուեալովը պիտի ճանչնային
զԱՅՆ : Այո՛, Ա՛ՅՍ «կերպով», վստահի ուրիշ կերպ չէր
կրնար ըլլալ : «պէտք է որ Որդին Մարդոյ բարձրանայ» :
Իրենց օրէնքին համեմատ Հրէայք կը քարկոծէին կարգ
մը յանցաւորները. սակայն Աստուծոյ հսկողութեամբ անոնք
չկրցան քարկոծել Յիսուսը, Թէպէտ շատ անգամ ուզեցին :
Արդէն ալ հռովմէական օրէնքը կ'արգիւտէր անոնց ուսէ
կերպով սպաննել իրենց յանցաւորները (Յովհ. ԺԲ. 31) :
Թէպէտ Յուդա Յիսուսը մասնեց անոնց, եւ իրենք պիտի
քարկոծէին զԱՅՆ՝ եթէ կրնային, սակայն չհամարձակելով
օրինաւորապէս յանձնեցին զԱՅՆ Պիղատոսին, որ ինքը
միայն կրնար խաչել տալ (Մատթ. Ի. 18, 19) : Դիպուա-
ծով եղած բան մը չէր մեր Փրկիչին մահուան «կերպը»,
այլ «Աստուծոյ որոշած խորհուրդովը եւ կանխագիտու-
թիւնովը» եղած կարգադրութիւն մը (Գործ. Բ. 23) : Եր-
բեմն կ'երեւէր Թէ վստահ կար որ աւրուէր Աստուծոյ
ա՛յս «խորհուրդը», բայց Անիկա կը կառավարէր դէպքե-
րը, եւ ուրիշ «կերպ» չէր կրնար ըլլալ : Երբ Պիղատոս
ըսաւ. հրէաներուն. «Դո՛ւք առէք զԱՅՆ, եւ ձե՛ր օրէնքին
համեմատ Անոր դատաստանը տեսէք (որ էր քարկոծել),
անոնք իրեն ըսին. «Մեզի օրինաւոր չէ մարդ մը մեղք-
նել»։ որպէսզի կատարուի Յիսուսի խօսքը՝ զոր ըսաւ,
իմացնելով Թէ ի՞նչ մահով ինք պիտի մեռնէր» (Յովհ.
ԺԲ. 31, 32) : «Մեզի օրինաւոր չէ» :

Պատմիչները կ'ըսեն որ իրենց օրէնքին համեմատ
յանցաւորին դատաստանը տեսնելու արտօնութիւնը հրէա-
ներէն ստուգեցաւ. ճիշդ այն տարին երբ Յիսուս պիտի
խաչուէր : Չարմանալի չէ՞ ստիկա : Աստուծոյ ծրագիրն
ի՞նչպէս պիտի փոխուէր, եւ մարգարէութիւններն ի՞նչ-
պէս պիտի վրիպէին, եթէ մեր Տէրոջ վերջին շարժմին
յաջորդ օրը հրատարակուէր հռովմէական օրէնքը՝ որ

կ'արգելէր հրէաներուն քարկոծել իրենց յանցաւորները՝՝՝: ձշմարտի ըսաւ Պետրոս իր առաջին քարոզին մէջ. «Անի-
կա Աստուծոյ որոշած խորհուրդովը եւ կանխագիտու-
թեամբը մասնուած ըլլալով՝ առիք եւ (չէ թէ ձեր, հա-
պա) «անօրէններու — Հռովմայեցիներու» ձեռքով փայտի
վրայ գամելով սպաննեցիք» (Գործ. Բ. 23): Յիրաւի, «Աս-
տուած ինչ որ առաջուրնէ... յայտնէր էր Քրիստոսի
չարքարուելուն վրայով, ա'յսպէս կատարեց» (Գործ. Գ. 18):

Յաւալի չէ՞ որ Յիսուս Քրիստոսի աշակերաններն
անգամ, հախուռակ Անոր կրկին կրկին ըրած նախաձե-
շութիւններուն, զայս ջնասկցան, եւ ասոր համար գայ-
թակիւցան Անոր մահուանը վրայ, եւ խախտեցան հա-
ւատքէն: Ասոր համար Ան յանգիմանեց զանոնք ըսելով.
«Ո՛վ անմիտներ ու թուլասիրտներ, հաւատալու աչն բոլոր
բաներուն՝ զորոնք մարգարէները խօսեցան: Զէ՞ որ Քրիս-
տոսի պէտք էր ԱՅՍ չարքարանքները կրել...»: Նաեւ
ըսաւ անոնց թէ, «Ա՛ՅՍՊԵՍ գրուած է եւ Ա՛ՅՍՊԵՍ ՊԵՏԲ
է՛ր Քրիստոսի չարքարուիլը» (Ղուկ. Ի՛. 25, 26, 46):

Անկարելի է չտեսնել ոչ միմակ մեր Տէր Յիսուս
Քրիստոսի մահուան, հապա խԱՉԻ՛ն վրայ մահուան
անհրաժեշտութիւնը: Աւա՛ղ, որ շատեր հիմա այսպէս
չեն քարոզեր, եւ շատեր ալ այսպէս չեն հաւատար:
Մի՞թէ ասոնք չեն «խաբին թշնամիները» (Փիլ. Գ. 18),
ինչպէս կը գրէ Պողոս, որ իրեն համար կը վկայէ թէ
ինքն Աւետարանը կը քարոզէր՝ ոչ թէ խօսքերու ճար-
տարութիւնով, որպէսզի Քրիստոսի խաբին քարոզութիւնը
ոչինչ չըլլայ» (Ա. Կորնթ. Ա. 17): Նաեւ թէ ինքը Կորնթ.
Թոս գնաց «ոչ թէ խօսքի կամ իմաստութեան գերազան-
ցութիւնով... վստահի եւ միաքս չդրի ձեր մէջ ուրիշ
բան մը գիտնալ, բայց միայն Յիսուս Քրիստոսը, եւ զԱՅՆ
խԱՉԻ ԵՒԱՄ» (Բ. 1, 2): Զէ թէ սուրբը եւ բարեգործը եւ
հրաշագործը... այլ խԱՉԵԱԼԸ: Ա՛ՅՍ է ՓՐԿԻԶԸ:

Յիրաւի մինչեւ այսօր ալ «խաբին քարոզութիւնը
յիմարութիւն է»... բայց որո՞ւ... ամենց, որ կը ԿՈՐ-
ՍՈՒԻՆ» (Ա. Կորնթ. Ա. 18): Որոշ խօսք չէ՞ այս, եւ
ահաւոր չէ՞: Անոնք որ Քրիստոսի մահը կը քարոզեն
առանց խաբին կարեւորութիւն տալու, կամ խաբէն ան-
շատ, եւ անոնք որ կ'ըսեն թէ կը հաւատան Անոր իրրեւ
կատարեալ Օրինակին, սակայն ոչ խԱՉԵԱԼԻՆ, չեն կար-
դար այս խօսքը. «խաբին քարոզութիւնը յիմարութիւն է
ամենց որ կը կորսուին» (նոր թարգմանութեամբ): «Բայց
մեզի որ կը փրկուինք՝ Աստուծոյ զօրութիւնն է»:

«Երբ երկրէ բարձրանամ, առէնք ալ ինձի ՊիՏի
ԲԱՇԵՄ»: Տէր Յիսուս պարզ կ'ըսէ թէ ինքը մեղաւորներն
իրեն կը քաշէ «խԱՉԻՆ մահուամբը»: Ամէն ճշմարտա-
պէս փրկուած հաւատացեալ կը վկայէ ասոր: Ան իր
սիրովը կը քաշէ, այո՛. բայց խա՛ջը կը ցուցնէ մեզի Անոր
սիրոյն աստիճանը եւ զօրութիւնը եւ տաքութիւնը: Անոր
կարելի էր մեռնիլ շատ կերպերով, բայց պիտի չկրնար
անպէս իրեն քաշել, ինչպէս հիմա կ'ընէ խԱՉԻՆ մագ-
նիստը: «Մահուան հնազանդ եղաւ», այո՛, բայց «խԱ-
ՉԻՆ մահուանը» (Փիլ. Բ. 8): Զայս կը հասկնան միայն
անոնք որ ա'յսպէս հաւատացած են Անոր:

Կը հաւատամ թէ այս է Աստուծոյ քարշումը, առանց

որոյ «Մէկը չկրնար Անոր գալ, եթէ... Հալը զանկա-
ջքաշէ» (Յովն. Զ. 44): Բայց Աստուած կը քաշէ «ամէնը»,
զի Քրիստոս «ամենուն համար մահ ճաշակեց» (Եր. Բ. 9)
եւ «ամենուն համար մեռաւ» (Բ. Կորնթ. Ե. 14, 15):
Սակայն ցաւալի՛ է որ ամէնը չեն գործ յօժարելով եւ
հաւատքով: Աստուած կը քաշէ, եւ խաբեալը կը քաշէ.
բայց դո՛ւն ալ պէտք է քաշուիս, երթաս: Ո՛հ, Ան կը
քաշէ, միշտ կը քաշէ, սիրովը կը քաշէ: Կարդա՛ նաեւ
Երեմ. ԼԱ. 3 եւ Ով. ԺԱ. 4:

Պօղոս չմերժեց զԱՅՆ՝ երբ քաշուեցաւ Անկէ Դամաս-
կոսի ճամբուն վրայ, հապա անմիջապէս եկաւ Անոր: Ո՛վ
կրնայ նկարագրել անոր ցնծութիւնը երբ քանի մը տարի
յետոյ կը գրէ. «Ես որ հիմա կ'ապրիմ, Աստուծոյ Որդուն
հաւատքովը կ'ապրիմ, որ զես սիրեց, եւ իր անձը ինձի
համար մատնեց» (Դաղ. Բ. 20): Ան է որ կ'ըսէ թէ «Քրիս-
տոս ամենուն համար մեռաւ». բայց կ'ըսէ նաեւ «ինձի՛
համար»:

Թերեւս ընթերցողն ալ կը հաւատայ թէ Քրիստոս
մեռաւ ամենուն համար, բայց արդեօք կը հաւատայ թէ
իրեն համար ալ մեռաւ խԱՉԻՆ վրայ, եւ կրնայ՝ ըսել
«ինձի չԱՄԱՐ»։ խԱՉԵԱԼԸ քաշե՛ր է քեզ իրեն, եւ հի-
մա ալ կը քաշէ՞ Սիրովը: Այսպէս Տէր Յիսուս Քրիստոս
Քաշող Մագնիսն է. ոչ միմակ իրրեւ մէկը որ մեռաւ,
այլ որ մեռաւ խԱՉԻՆ վրայ, իրրեւ խԱՉԵԱԼ ԲՐԻՍՏՈՍ:

«Տէրջը ձայնը լսեցի, ըսաւ, ինձի եկուր»։ Ես ալ
«ինչպէս էի՛ Անոր եկայ... եկայ, եւ Ան եղաւ ինձի
Արեւ, Լուսոյ Շրջան»։ Փա՛ռք Անոր:

Բէսէտինա, Ամերիկա

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Այդ ձեր պարծանքը աղէկ չէ, չէ՞ք
գիտեր որ քիչ մը խմորը բոլոր զանգուա-
ծը կը խմորէ: Մաքրեցէք հին խմորը
մէկգի, որպէսզի ըլլաք նոր զանգուած,
ինչպէս անխմոր էք, վստահի Քրիստոս մեր
զատիկը մեզի համար զոհուեցաւ: Ուստի
սոն կատարենք, ոչ թէ հին խմորով եւ ոչ
թէ չարութեան ու անզգամութեան խմո-
րովը, հապա անկեղծութեան ու ճշմար-
տութեան անխմոր հացովը:

(Ա. Կորնթ. Ե. 6-8)

«Ուստի սոն կատարենք»: Այսպէս կը խօսի Պօղոս
առաքեալ Կորնթացիներուն եւ անոնց յաջորդող բոլոր
քրիստոնեաներուն: Հաւանաբար այս նամակը գրուեցաւ
զատիկէն առաջ, երբ առաքեալին միտքը ձգտուած էր
առ այդ յաղթական փառաւոր օրը:

«Տոն կատարենք», վստահի Քրիստոս մեր զատիկը
մեզի համար զոհուեցաւ:

Տճն կատարենք անխառնաժամբ եւս մենք : Վանդի մեր աջքերն ալ ուղղուած են դէպի այն տոնական օրերը. տօններ ուրախութեամբ եւ աշխոյսի ուրախութեամբ մը որ մեր բոլոր կեանքին մէջ տեւական ըլլայ :

Բայց յաշմի է թէ՛ առաքելին սրտին մէջ խորհուրդ մըն ալ կայ թէ մի գուցէ կորնթացիները տօն կատարեն անվայել, ինչպէս սովոր էին կատարել իրենց աշխարհի բռնած ճամբուն մէջ եւ ժամկէտին ու մօքին ուզածը կատարելու պարագաներուն. այս պատճառաւ տոնական օրերու այս վառ խորհրդածութեանց առաջ նա կը մտաբերէ սոյն վտանգաւոր խմորը եւ կը յիշեցնէ անոնց մշտնջենական զտուրիւր տօնել եւ ազդարարելով անոնց «այդ ձեր պարծանքը աղէկ չէ» :

Երանի թէ սրբազան առաքելին այս ազդարարական խօսքերը խորքանշխարհայն Հայո. ակամջին եւս թարմ հնչէր, ամէն տոնական օրերու, մանաւանդ զատիկի տօնին :

Իրօք որքան խառն խմորով կը տօնուին զատիկները այս վերջին ժամանակներուն մէջ, որոնց մէջ չէ թէ Յարութեայ Քրիստոսն է խորհրդածութեան եւ ուրախութեան նիւթ, հապա բոլորովին վաղանցիկ, անամենի, ալաւ. նելի, Քրիստոսի անվայել բաներ :

Ուստի եթէ քրիստոնեաներ ենք, տարբերելու ենք քրիստոնեայ կոչուած եւ սակայն Անոր զօրութիւնը ուրացողներէն :

ԶԱՏԻԿԸ ԿԱՏԱՐԵՆԻՔ.

1. — Ուրախութեամբ. — Վանդի

Մենք ալ զատական գառնուկ մը ունինք, ինչպէս խորաշխարհներ ինչ ուխտի ժամանակը : Գիտէ՞ք ինչ ժամանակի զատական գառնուկին պատմութիւնը : Հին եգիպտոսի փողոցներուն մէջէն աստուածային դատաստանը կ'անցնէր բոլոր եգիպտացի անդրանիկներուն վրայէն : Աստուած որո՞ւ դրանդեաց վրայ որ արին գտաւ, զատաւարտութենէն ազատ հրշակեց եւ սոյն տուններէն իր ժողովուրդը հանեց անապատ տանելու եւ անոնց հետ իր Ուրախ րնելու : Անկէ վերջ կատարուելիք խորաշխարհայն զատիկի տօն յիշեցնելու էր թէ, ա. — Տէրը խնայած էր իրենց, բ. — Տէրը իրենց հետ հաշտուած էր : Միեւնոյն ատեն յիշեցնելու էր թէ, ա. — իրենք ազատուած էին եգիպտոսի երկրէն, բ. — ընտրուած էին իբր Ստոնոյ ժողովուրդ, մասնաւոր նշանակութեամբ մը : Զատիկը Աստուածային այս խորհուրդներուն գրաւականն էր :

Բայց այդ զատական գառնուկը նշանակին էր իսրայէլի մարգարէացուած, մարգարէներուն հետեւն նշմարած, ժողովուրդին անկեղծ եւ չտեսած բայց հաւատքի ու յոյսի կեդրոնացումը եղող Գառնուկին — Կեդրոնի Փրկչին, որ մեռաւ մեր մեղքերուն համար եւ գրքերուն բաժնի պէս յարութիւն ալ առաւ, որ իրով կատարելապէս հաշտեցնէ զմեզ Աստուծոյ հետ, որ իր կեանքը տուաւ զմեզ փրկելու համար, որ հաւատացեալները մահուան ձեռքէն առաւ, որ անոնց համար կեանքի զօրութիւն եղաւ : Ասիկա կը նշանակէ թէ մենք իրով ազատ ենք մեղքի բեռէն, մահուան բռնութենէն ու խաւարի իշխանութենէն : Արդ, ո՞վ մահ ո՞ր է քու խայծոցդ. . . :

Մեր կենդանի Փրկիչը բաւ. թէ ինքը եւ Հայրը մէկ են եւ իր միակ փափաքն է որ մենք ալ Անոր հետ մէկ ըլլանք : Ասիկա կը նշանակէ թէ մենք կատարեալ գրաւա-

կանն ունինք Նոր Ուխտի, Անոր քաղաքացիներն ըլլալու, Սուրբ աղօ, Սեփական ժողովուրդ, որ միայն մէկ կոչում ունի, քարոզել Անոր առաքինութիւնները (Ա. Պետ. Բ. 9)

Արդ ուրախութեամբ վաշելնք Զատիկը. — վա. սրնդի ուրախութիւնը Աստուծոյ կամքն է : Ուրախ եղէ՛ք Տէրոջմով, ամէն ատեն, դարձեալ կ'ըսեմ, ուրախ եղէ՛ք (Փղ. Գ. 4) : Բայց . . . Ուրախ էք անպատմելի ու փառաւորեալ խնդութիւնով. (Ա. Պետ. Ա. 8) : Քրիստոնէական ուրախութիւնը՝ քրիստոնէին մաս ու բաժինն է, առանձնաշնորհն է. Աստուծոյ պարգեւն է : Ինչէ քրիստոնեան չորախանայ, հապա ո՞վ ուրախանալու է : Ո՞վ քրիստոնէին հաւատքի առարկային — Քրիստոսի նման հաստատուն բաժին ունի : Զէ կարելի երեւակայիլ հաւատոյ եւ տրամութեան միացեալ կեանք : Տրամութիւնը մեղք կ'ենթադրէ : Տէրոջմով ուրախութիւնը ասոր պարգեւն է, միեւնոյն ատեն սուրբ պարտականութիւն մը Անոր առջեւ :

2. — Զատիկան Գառնուկը ամէն բան կատարեց. —

Ուրախանանք, վանդի կըր մենք տկար էինք, յարմար ժամանակին Քրիստոս ամբարիշտներուն համար մեռաւ :

Ուստի միտքերիդ ըրէ՛ք, որ դուք ատեն մը մարմնով հեծանտներ ըլլալով՝ առանց Քրիստոսի էիք, եւ օտարացած խոտմունքին ուխտերէն, ու յոյս մըն ալ չուէիք եւ աշխարհի մէջ անաստուած էիք : Բայց հիմա Քրիստոս Յիսուսով դուք . . . մերձաւոր եղաք Քրիստոսի արինովը : (Եփես. Բ. 1-13) :

Այս կը նշանակէ թէ մեր բոլոր անօրէնութիւններն ու զանցառութիւնները, մեղքերն ու անիրաւութիւնները, Գառնուկին հետ խաչին վրայ բարձրանալով՝ Անոր հետ գերեզմանին մէջ ծաղուեցան, եւ այսպէս հաշտութեան եւ թողութեան մեծ գործողութիւնը ի կատար հանուեցաւ. «Ամէն բան կատարուեցաւ» :

3. — Մեղքերու ներքին վտաճուածութիւն տուաւ. —

Այս վտաճութիւնը հաւատքով կ'ըլլայ : Հաւատքով առած ենք ու կ'առնենք մեր մեղքերու թողութեան վտաճութիւնը ու Տէր Յիսուս կ'օգնէ մեզի այս վտաճութեան իր Յարութիւնովը : Հաւատա՛ եղած մեծ դէպքին եւ ուրախութիւնը անսահման պիտի ըլլայ :

Անգամ մը հարաւային Ամերիկա գործող իտալացի աղքատ գործաւոր մը հաւատաց իր հիւսպատոսին, որ պատմեց թէ իր հեռաւոր ազգականը մեռած ըլլալով՝ իրեն միլիոններ թողուցած էր իտալիոյ մէջ : Այդ հաւատքին համեմատ օգնեց հիւսպատոսին խօսքը : Երիտասարդը կըրնար չհաւատալու իմարութիւնն ունենալով՝ իր գործին վերաբառնալ, վանդի ցարդ լնաւ ունէ մէկէ մը միլիոնատերին մասին լսած չէր, եւ ան ալ հեռո՞ւ երկրի մէջ, բայց հաւատաց եւ միլիոնատէր եղաւ :

Յիսուս Քրիստոսի — կենդանի Զատիկի Գառնուկին մահուանէն ու յարութենէն յետոյ ալ յուսահատութիւն չկայ. . .

Ամերիկա հիմա Յուդայի ցեղէն եղող Աւիւն է, Յուդեաներ, որ մահուամբ մահուան յաղթեց, եւ յարութեամբ անբռնարարելի եւ անհաւասար իրաւունքի հասաւ :

Ուրախութեամբ զատիկը տօնէ, վանդի քու մեղքդ ներուած է Յիսուս Քրիստոսով. եւ Ան որ առաջին քայլին օգնեց քեզի պիտի օգնէ երկրորդին եւ վերջինին ալ, մինչեւ հասնիս քու յաւիտեական րնակարանդ, հոն յաւիտեանս թագաւորելու :

Այս ուրախութիւնը քուդ է, քու մասդ ու բաժնդ է,

այսու ամենայնիւ ասանկ մեծ ուրախութեան մը առջեւ սատարան ընդհանրապէս անտարբեր ջոճար, այլ կը ջանայ ատուածային ջինջ խորհուրդը պատրել կամ նաեւ մայնել:

Քանինն՝ զատիկը կը տօնեն եւ պիտի տօնեն, առանձն անոր փառաւոր նշանակութիւնը հասկնալու, այս պատճառաւ արագան առաքելը աղբարարական զանգակը կը հնչեցնէ:

ԶԱՏԻԿԸ ԿԱՏՅՐԵՆՔ

Բ. Անկեղծութեան եւ ճշմարտութեան անխորհրդակցութիւնը:

Ա՛րք, Զատիկ ուրախութիւնը վրդովող բան մը կայ՝ զոր նախապէս վերցնել հարկ է: Իսրայէլացիք զատիկը տօնելէ առաջ, իրենց տաները խմորէն Թեփուէն բոլորովին կը մաքրէին, կը արբէին ամէն անկիւնները, ամէն առաք. կաները մանրակրկիտ մաքրութեան գործողութենէն կ'անցնէին ապահով ըլլալու: Թէ խմոր չկայ:

Եթէ խմոր ըլլայ, զատիկան գառը չկրնար ներս մտնել, երկուքը մէկտեղ չեն կրնար ըլլալ: Զատիկան գառը ամբողջ տունը կ'ուզէ: Զաքէոս զգաց գայ եւ քաջարար ոտքի ելած ըստ. «Տէր, իմ ստացուածքիս կէտը աղբատնէրուն կուտամ եւ (իր մաքսապետ) որո՞ւ որ զըրկանք բրած եմ, չորեքսպառիկ կը հատուցանեմ»: Խմորը դուրս քանի որ դու ներս մտար:

Այս խօսքը ոչ միայն ազգովին, համայնքով, այլ նաեւ անհատապէս ըսելու ենք: Խմորը պէտք է դուրս նետուի, կրնայ դուրս նետուիլ եւ նետուելու է, եթէ ոչ չես կրնար Զատիկը տօնել ուրախութեամբ:

Գիտցիր Թէ Յարուցեալը քեզի համար մանաւանդակ զատիկան ուրախութիւն մը նախապատրաստած է: Այս ուրախութիւնը սակայն ոչ Թէ ժամանակաւոր է եւ ամէն տարի միայն մէկ անգամ կուգայ քանի մը օրուան համար միայն, այլ ուրախութիւնը ո'նեցողք, Զատիկ տօնը կը կատարէ վայելչութիւնով ամէն տարի, ամէն կիրակի անոր յիշատակութիւնով կ'ուրախանայ եւ նոյն յարութեան ուրախութիւնովը պարարտած է ամէն օր:

Մշակչեան Զատիկ կատարէ ուրախութեամբ եւ անկեղծութեան եւ ճշմարտութեան անխորհրդակցութիւն:

Թող այս Զատիկը զքեզ տոյն փառաւոր վիճակին հասցնէ:

Արդ մենք ալ յարութեան,

Հանդէսը կատարենք.

եւ ի ձայն ցնծութեան.

Ուրախալից գոցենք.

«ԲՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ

ԻԲԲ ԱՆԳՐԱՆԻԿ ՅԱՐՈՒՅԵԼՈՑ»:

Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ



ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ԻՆՉՊէՍ ԲԱՐԻ ՊՏՈՒՂ

ԿՐՆԱՆՔ ՈՒՆԵՆԱԼ

«Մամա», կ'ըսէր Սօֆի բերդըւլի խանդավառութեամբ ձեռքին մէջ նամակ մը երեքցնելով, «Գալիք շաբաթ աօքթ. Ս. պիտի գայ, անհրաժեշտ է մաքրել բոլոր սենեակները եւ հիւրատրահը պատրաստել, ընդունելութեան համար»:

Այդ օրն իսկ մայր եւ դուստր աւելով եւ սրբիչով զործի սկսան. ու քանի մը օրէն ամենուրէք անբաղդատելի մաքրութեամբ կը փայլէր եւ բոլոր սենեակները Մայիօի ծաղկազարդ առանձնաւոր նման կը ժպտէին: Տօքթ. Ս. այս ընտանիքին սիրելի մտերիմն էր, շատ բծախնդիր մաքրութեան եւ կրեւորութիւն ու նկարագրով անստորիկ թափանցականութիւն ունեցող քրիստոնեայ մը. ուստի հարկ էր առնել արդար կարգ ու սարքով օժտել այս մաքրաճաշակ հիւրը պատուելու համար:

Հոս յոյժ թելադրիչ նմանութիւն մը կ'երեւի կարգ մը քրիստոնեաներու սրտին վիճակը հաւինալու եւ միանգամայն բացատրելու պատճառը իրենց ամուլ չոր կեանքին: Անոնք կը փափաքէին եւ մերթ ընդ մերթ կը պայպակին այս սրբազան Սուրբ Հոգին, իրենց բնակարանի այցելուն, սրտին հիւրը ըլլայ, բայց տրամադիր չեն դառնալիք այն լիակատար ներքին մաքրագործման, որը՝ էական ու կենսական պայմանն է երկնային այցելութեան: Կարգալ Հոգով. ԺԲ. 1-2: Ը. 9-10: Յուդա 19: Երբեմն անոնց ջերմեռանդ ազօթքներուն արձագանքը կը զրոգէ տաճարին սիւները, կը յուզէ սիրտերը, կը խոտովէ մեղաւորներուն թմրած խիզճերը, եւ սակայն երկնային կրակը չիխնար իրենց ողջակէզին վրայ ու զոգցես, ազօթքներու ձայնին հետ կը մարի, կը վերջանայ իրենց եռանդն ալ:

Ո՛վ քրիստոնեայ, կեանքդ չոր ու տափա՞կ է, անխտիր ամենուն կողմէ քաղուելու համար օրհնութեան պատուներ կը պակսի՞ն հաւատքիդ ծառէն, Յուլիսի տապ օրերուն՝ դաշտի ճամբու մը վրայ յափնաբեկ ուղեւորները կազդուրող միջոց մը եղած չե՞ս ցարդ: Կը զանդատի՞ս թէ մուրաճներուն առաջնորդ, հիւանդներուն մխիթարութիւն, անօթիներուն հաց, կազերուն ոտք եւ կոյրերուն աչք մը չես կրցած ըլլալ: Յիշէ՛, որ «Աստուած է որ ձեր մէջը կը ներգործէ կամենալը ու ընելը Իր հաճութեանը համար»: Փիլ. Բ. 13:

Կը կարծե՞ս սակաւն թէ Աստուծոյ Հոգին կրնայ սրաիդ մէջ բնակիլ ու գործել, երբ թուլատրած ես կարգ մը ապականութիւններու քու կուրծքիդ տակ իրենց բոյնը շինելու ու թուխտի նստելու: Աստուծոյ Հոգին կը հրաւիրես, բայց սիրտդ անմաքուր, կեղտոտ կը պահես. ձեռքդ մաճին վրայ դրած ես բայց ետ կը նայիս. սրբուհիլ կուզես բայց կարգ մը մեղքերէդ չես հրաժարիր, յաղթողին արմաւենին կ'ուզես բռնել, բայց Աստուծոյ բոլոր գէնքերովն ու գրահովը չես սպասողինութիւնը: Կարդա ուշադրութեամբ Գաղ. Ե. 17-26, եւ հոն պիտի գտնես Հոգւոյն պատուիրները հակադրուած մարմնոյն պատուիրներուն նկարուն եւ ճիշդ վրձինով մը, եւ հաստատ պիտոյիր որ եթէ կեանքդ Հոգիին ներգործելով այս բոլոր բարի պատուիրները չկարենայ արտադրել, քու մարմնոյ կարգ մը ցանկութիւններդ գրեզ անպատու կ'ըստան պիտի ընեն: Յիշէ՛ նաեւ որ Սբ. Հոգին կրնաս վշտացնել: Եփես. Դ. 30-32 Ե. 9. Ա. Թեա. Ե. 19:

Արդ, կը տեսնա՞ս լեցուիլ Հոգիով, պարպուէ՛ աշխարհիկ կեանքի բոլոր խորհուրդներէն. վերակենդանանալ կ'ուզե՞ս, հին կեանքդ կատարելապէս պէտք է մահանայ. յայնժամ պիտի ունենաս առողջ, նոր կեանք մը: Կը փափաքե՞ս ծառայել, օգտակար ու օրհնութիւն ըլլալ. զոհէ՛ ինչ որ ունիս Աստուծոյ գերազանց սիրող սիրոյն, եւ Հոգին քեզ Քրիստոսի վրայ հաստատուած պտղաբեր ճիւղ մը պիտի ընէ: Հետեւիլ կ'ուզե՞ս Յիսուսի. գնա՛ ամէն բան ծախէ՛, լքէ՛, ու արհամարհէ՛, որոնք իրանցովս եղած են քու շնորհքի համարելու, եւ յայնժամ երկինքը գանձ ու երկրի վրայ պտուղներ պիտի ունենաս:

Յ. Մ. Մ.

ԹՈՒՐԿԵՐԷՆ ՄԱՍ

ԽԱՉԸՆ ՄԱԳՍԷՏԻ

«Հաշա քի պէն Բաղլամըզ Յիսուս Քրիստոսուն խաչընտան դարբ պիր շէյլէ իֆթիխար էտէյիմ, անըն վառըթասըյլա տիւնեստ պոնտ, պէն տաիի տիւնեսայա սալպ օլունտում»: Գաղ. Ե. 14:

Խաչըն մագստի ատէմի իճրաթընտան սոյմագ վէ անըն թապիաթընը հիւքմ էթմէք տիր: Խաչ ինսանի թապիաթը թամիր էթմէյէ կէլմէտի, չօգ քիմսէլէր Խաչը պու եօլտա զուլանմագ իսթէրլէր, անլէր Խաչը էլպիսէ իւզէրինէ եէնի պիր եամա կիպի զօյմագ իսթէրլէր:

Լաքին պու թուլմագ, պու սէպէպտէն պու կիպիլէր տիւնեստա տաիմա երըթըզ էլպիսէ իչինտէ կէզէրլէր վէ պիր չարէ պուլմագ իչին պիր վաիգտէն օլ պիրինէ կիթմէքտէ օլուրլար: Էսքի լիպաս, եանի էսքի ատէմ սոյունուլմագ, Խաչըն հիւքմիւնէ թէյլիմ էտիլմէք կէրէք տիր: Խաչ ինսանի թապիաթտան օլան հէր շէյ իւզէրինէ լանէթ հազար վէ պիզէ մէլուն օլան պիրինէ մէվպիինի վէրիւր վէ հէր քիմ քի Բուհիլ Գուտս վառըթասըյլա Խաչա զապուլանմը իսէ օրատա քէնաի թապիաթը իւզէրինէ էօլիմ իլամընը իմզալամըզ վէ քէնաի քէնտինի հիւքմ էտէրէք ազատ էթմիշ տիր: Զիրա Խաչըն իշարէթինի թաշըմայան հէր շէյին իւզէրինտէ լանէթ լէվհասը հազըլը տըր, վէ հէր քիմ քի քէնաի հայաթընա սարըլմըզ վէ անտէն վաղ կէչմէք իսթէմէզս, օլ լանէթէտէ սարըլմըզ օլուր: Խաչ հէր քիմէ Բուհիլ Գուտս վառըթասըյլա իզհար էտիլմիշ իսէ օ քէնաի քէնտինէ աէօնմէքտէն վէ քէնտինտէ էյի պիր շէյ արամագտան վաղ կէչէր վէ այնի վաղթատա պաշգալարլատա հիւքմ էթմէյի պրագըր:

Լաքին Բուհիլ Գուտս պիզէ պու տէքսի էօյրէթմէտիքճէ պիզ տաիմա քէնաիմիզէ կէրի աէօնէր վէ քէնտինիզտէ էյի պիր շէյ արարըզ վէ աէօնագ պիզտէ էյի պիր շէյ եօզ մ. տըր քի Ալլահ անը պէյէնսին վէ անըն իւզէրինէ Խաչըն իշարէթինի զօմագա մէճպուր օյմասըն աէյու տիւշիւնիւրիւզ վէ պիզտէ Ալլահըն պէյէնէճէյի պիր շէյ պուլամասըլըմըզտա, եանըլը պիր հիւքմէ տիւշար օլուրուզ վէ պու շէյ տիւշմէնէ Ֆուրսաթ վէրիւր, պիզի գարանըզա կէօթիւրմէյէ վէ պիզէ աէմէյէ քի աէնտէ էյի պիր շէյ եօզ տըր վէ մատէմ քի աէնտէ էյի պիր շէյ եօզ տըր քի Ալլահ անըն իւզէրինէ պիրա էտէպիւսին, իմաի վաղ կէչ: Լաքին Ալլահ պիզիմ թապիաթըմըզ իւզէրինտէ պիրա էտէպիւմէք իչին պիզտէ հիչ պիր էյի շէյ արամագ, իլլա Խաչը վառըթասըյլա պիզիմ թապիաթըմըզ պիր թարաֆա գօր, թա քի քէնտինի պիզտէ եէնի պիր շէյ խալպ էյլէսին: Խաչ ատէմի իֆլասիյէթէ կէօթիւրիւր վէ պու եօլտա Ալլահըն իշլէմէսինէ մէյտան աչար: Խաչ Յիսուսուն շայիրտէրինի տաիի իֆլասիյէթէ կէօթիւրտիւ, մուալլիմէրինին քէնտիլէրէ սէօյլէմիշ իտիյի ճիւմլէ սէօզլէր պուլու եափամամըլ իտի: Յիսուսուն արարը պիր կիթտիլէրի օլ իւչ սէնէլէր գարֆընտա էլտէ էթտիք աէյու գանն էթտիլէրի նուր թաճընը (բրաբիոն) Խաչ զըրտը վէ քէնտի թապիաթլարընըն նէ եափապիլիւր իտիլինի վէ նէ գատար տէյէրսիզ օլտուղունու մէյտանա գօտու: Պէօյլէճէ անլէր Բուհիլ Գուտս զապուլ էտէպիւմէք իչին հազըր էտիլտիլէր վէ Բուհիլ Գուտս անլէրէ պաշգա պիր թապիաթ վէ պաշ-

զա պիւր հայաթ կէթիւրտի : Զիւրա պիւր հիւ պիւր վազթ խաչը Բուհ իւլ Գուտտաւն ալըրամալըզ : Էյէր պիւրիմ պիւր Աւազ Ուրբաթըմըզ օլմամըշ իսէ, Զատիկ վէ Պէնտէկոստէմիզ օլմամազ : Իւահի հայաթ վէ Ալլահըն զանիւլի իչիւն անճազ խաչտա հազըրլանապիւրիւզ, Էալընըզ Յիսուս իլէ խաչլանմըշ օլանլար Բուհ իւլ Գուտտա զապլար օլապիւրիւրէր : Էսքի տաէմի հիւքմ էտէն վասըթա Քրիստոսուն խաչը ալըր : Բօմ. 6 : 6 : Եէնի տաէմին Էէնի տօղուշունուն քէօքիւ Քրիստոսուն զըյամընտա պուլունուր, Ա. Պետ. 1. 3 : Պուտա Բուհ իւլ Գուտտ վասըթապըյա օլուր. Յովհ. 3. 5—15 : «Հէր քիւ քի հայաթընը զայ էաէրսէ անը պուլաճազ տըր», թէմէլ պու տըր :

Պիւզ խաչըն ամէլիսի իչիւնէ կիրմէլիւիզ, Քրիստոս իլէ պէրապէր խաչլանմըշլար, Էանի հիւքմ օլունմուշլար վէ պիւր թարաֆա զօնուլմուշ քիմսէլէր հալընտա, օլ գէման ինայէթ վէ զալէպէ հայաթընա զափու աչըլմըշ օլուր : Էօլիւ ճէսէտին թօփրաղա զօնուլտուղու կիպի պէօյլէտէ Էօլիւմէ ախո օլան հէր շէլին Էօլիւմէ թէսլիւմ էտիւմէսի իճապ էաէր :

Ճիւմէ միւմինլէրտէ կէօրաիւլիւմիւզ կիպի խաչըն էասընը Արրահամըն էօմրիւնտէ տախի կէօրիւյօրուզ, Արրահամ իչիւն քէնտի ճէսէտին վէ Սարանըն ճէսէտինին Էօլմէքտէ օլտուղունու կէ լմէսի իճապ էթտի, թա թապիաթտան հիւ պիւր իւմիտի գալմալընճայա զատար, Իպր. 11. 11—12 : Թապիաթ տաիմա պիւր թարաֆա զօնուլտու, վաթանընտան չըզաղը կիւնտէն պաշլայարազ Իսահակըն զուրպան էտիլտիլի կիւնէ գատար : Իպր. 9. 14տէ Բուհ իւլ Գուտտ էգէլի պիւր Բուհ տըր աէյու օղույօրուզ. Օ տաիմա այնի խաթթ իւզէրինտէ կիտէր, Օ պաշըմըզ օլան Քրիստոսը խաչա կէօթիւրտիւ, վէ պիւր տախի տաիմա թէքրար պէ թէքրար օրայա զաղուզլամաղտա օլուր, զիւրա Անըն միւմինտէ իշի իքի տիւր, պիւր թարաֆտան էօլիւմէ ախո օլանը Էօլիւմէ կէօթիւրմէք, Բօմ. 8. 13 վէ տիկէր թարաֆտան Ալլահըն տէրունիմիզէ զօմուշ օլտուղու հայաթը իղհար էթմէք տիւր : Բ. Կորն. 3. 16 :

Միւթ. Ե. Պ.

Լիօն.

Պու պէնտ Ալմանճա լիսանտա զըյմէթլի մատտէլէրի հափի քիւլէլէք պիւր քիթապտան ալընմըշ տըր. Բապպ իսթէրսէ անլէրտէն պազըլարընը թէրճէմէ էտէրէք «Բանքիւր»է նէշը էտէճէլիզ :



ՄԷԶԱՐՏԱՆ ԷՕԹԷ ՀԱՅԱԹ ՎԱՐ ՄԸ

Թարիխին հէր զէմանընտա ինսան ֆիքրի պու սիւալ իլէ մէշղուլ օլմուշ տըր. ատէմ քէնտի սէվիւլիւլէրինի հէր մէզարա գօտուգճա մէզարըն էօնիւնտէ վէ Էա քէնտի խալվէթինտէ շու սիւալ զարշրսընտա պուլունուր, աճէպա շու զարանլըզ շուգուր ինսանի հայաթըն էնճամը վէ ճիւմէ հասրէթ վէ զապիւլիլէթլէրիմիզին տէֆն օլունտուղու պիւր կիրտա՞պ մը Էօգսա անտէն էօթէտէ ինսան իչիւն պիւր հայաթ վար մը :

Պու սիւալըն էօնիւնտէ ինսան կէօզլէրինի քէնտի տէրունինէ չէվիւրտիլինտէ զանն էտէրսին տէրունտէն պէր սէտա կէլիւր վէ փրօթէսթօ էտէրէք տէր, խա՛յր պու զարանլըզ շուգուր վէ անըն իւզէրինտէքի շու պիւր զաշ զէնպիլ թօփրազ պէնիմ հայաթըմա խիթամ վէրէմէզ վէ թիւքէնմէզ հասրէթ վէ զապիւլիլէթլէրիմէ պիւր վերշակէտ զօյամազ : Իլմ տախի ինսանտա ազ սօնրա թօփրաղա թէհափիւլ էտէճէք շու ճէսէտէ ֆաիզ պիւր րուհուն մէվճուտիլէթլինի զապուլ էտէր : Աճէպա պէօյլէ պիւր րուհուն հիւ օլմասը միւմքին մի՞ տիւր :

Լաքին պու սիւալըն ասըլ անախթարընը Ալլահըն քէլամընտա վէ Բապպըմըզ Յիսուս Քրիստոսուն հայաթընտա պուլունուր : Ալլահըն քէլամը շու կէօրիւնիւր ալէմին արգասընտա կէօրիւնմէյէն պիւր ալէմին մէվճուտիլէթլինի վէ ճանըն Էօլիւմսիւզ իտիլինի պիւզէ պէյան էտիյօր :

Բապպըմըզ Յիսուս Քրիստոս սէմատան թէնէզգիւլիւյէ պէշէրիլէթլին թարիխինտէ Էէնի պիւր սահիֆէ աչտը, հայաթ վէ կէօրիւնմէյէն ալէմէ տախի քէնտի հայաթ վէ քէլամըյէ ինսան ֆիքրինէ Էէնի նուր վէրտի վէ Էօլիւմ վէ զըյամըյլէ տէ քէլամլարընըն հագիգաթ իտիլինի թաստըզ էյլէտի : Օ թէնէզգիւլիւյէ Ալլահըն պիւզէ օլան աճաիպ մուհապէթինի իղհար էյլէտի վէ հայաթ վէ քէլամըյէ էօմրիւն մագսէտ վէ ուլվիլէթլինի պիւրտիւրտի, Էլէմ վէ Էօլիւմիւ իլէ կիւնահարըմըզ իչիւն քէֆարէթի իճրա էթտի վէ զըյամըյլէ Էօլիւմէ վէ մէզարա զալիպ օլան պիւր զաթ իտիլինի վէ Էօլիւմսիւզիւլիւ իսպաթ էտիպ պիւզէ տիւր պիւր իւմիւտ պախշ էյլէտի : Սէմայա ուրուճու իլէ տախի կէօրիւնմէյէն

ալէմէ կէրի թէյրան էտէրէք ճէլալ իլէ փէտէ-
րին սաղընտա օթուրտու վէ զէմինտէն սէմա-
յա պիր եօլ աչարազ քէնտինէ իման էտէնլէ-
րին ճիւմլէսի իչիւն Փէտէրին խանէսինտէ
եէր հազըրլատըղընտա թէքրար կէլիպ անլէրի
քէնտի եանընա ալաճաղընը վատ էյլէտի :
Միւպարէ՛ք վատ, միւպարէ՛ք իւմիտ :

Լաքին աճէպա Քրիստոսուն գըյամը պիր
վազաամը տըր : Էվվէթ օ թարիխի պիր վա-
զաա տըր : Մէզարընը պէքլէյէն պէքճիլէր վէ
քէնտինի անլէրէ տիրի իզհար էթմիշ օլտու-
ղու շայիրտլէրի անըն գըյամընըն շահիտլէ-
րի տիրլէր : Պունտան մատա հէր ասրտա
Քրիստոսուն խաչընտա նէֆսէ վէ կիւնահա
էօլմիւշ վէ անըն գըյամընըն գուվվէթի իլէ
ըուհճա իհեա օլունմուշ միւմին վէ միւմինէլէ-
րին պիհիսապ ճիւմհուրու տախի անըն էօլիւ
տէյիլ իլլա եաշայան պիր խէլասքեար իտիյի-
նին տիրի շահիտլէրի տիր :

Իմտի մէզար պաշգա պիր շէյ տէյիլ ան-
ճազ էօմը եօլճուլուղումուգտա շու կէօրիւնիւր
ալէմ իլէ կէօրիւնմէյէնին արասընտա պիր
թունէլ տիր, պիր կէչիտ տիր : Շու հալտա
մուհիմմ սիւալ մէզարտան էօթէտէ հայաթ
վար մը տէյիլ, իլլա օլ հայաթը ներէ՛տէ վէ
նասը՛լ կէչիթէճէյիմիդ տիր : Պունու պիզիմ
պու կիւնքի էօմրիւմիւզ վէ Ալլահա նազարէն
թուլտուղումուզ մէվգի թային էտէր : Էյէր
պու կիւն Քրիստոսուն գանընտա եալգանմըշ,
նէֆսէ վէ տիւնեայա էօլմիւշ վէ Քրիստոս իլէ
պէրապէր շիմտի գըյամ հայաթընը եաշայօր
իսէք պիր ազտան շու ճէսէտտէն այրըլտըղը-
մըզտա այնի հայաթը պինիհայէ տէրէճէտէ
ճէլիլ մանատա Քրիստոս իլէ պէրապէր եաշա-
յաճաղըզ : Լաքին պու կիւն հալա կիւնահ վէ
նէֆս էօմրիւնէ թապի քիմսէլէր իսէք, ալտան-
մայալըմ չիւն պէօյլէ պիր էօմը էպէտի հէլաք-
տա գարար գըլաճազ տըր :

Վազթ կէլիյօր քի գապըլարտա օլանլարըն
ճիւմլէսի Անըն սէտասընը իշիտէճէքլէր,
խայր իշլէյէնլէր հայաթ գըյամէթինէ վէ շէրը
իշլէյէնլէր իսէ մահքիւմիյէթ գըյամէթինէ
չըգաճազլար տըր : Յով. Յ. 28—29 :

Քրիստոսուն գըյամը միւթտէսինին շու
կիւնիւնտէ Բապպ հէր թազըմտան քիմսէլէրէ
ազիմ ինայէթ իհսան էթմէյէ հազըր տըր :
Մահգունլարը թէսէլլի էթմէք, իւմիւտսիզլէրի
տիրի իւմիտէ մալիք էթմէք, կէվշէմիշ վէ
զաիֆլէնմիշ օլան հէր պիր միւմինի հայաթ

վէ գիյատէսիյլէ հայաթա մալիք էթմէք վէ
շիմտիյէ գատար խէլասը ըէտտ վէ թէէլիւր
էթմիշ օլանլարա պու կիւն ճիւտտի թէվպէ
վէ իման իլէ խաչա եազլաշտըզլարը հալտէ
քեամիլէն խէլաս էտիպ էպէտի հայաթա նաիլ
էտէճէք տիր :

Գըյամէթ վէ հայաթ պէնիմ, պանա իման
էտէն էօլմիւշ օլտա պիլէ հայաթտա օլաճազ
տըր վէ հէր հայաթտա օլուպ պանա իման
էտէն ասլա էօլմէյէճէք տիր : Պունա ինանը՛ր-
մըսըն. Յովհ. 11. 23—26 :

Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԱՆ

Լիօն

ՄԱՂՐՈՒՐ ՏԻՆՍԻՉԻՆ ԻՏՏԻԱՍԸ

Մը. Մուտի նազլ էտիյօր քի Ալմանիանըն
Հանօվըր շէհրինտէ Ալլահըն վարըղընը ին-
քեար էտիպ գըյամէթ թասավվուրունու հիճզ
էտէն պիր Ալման գօնթէս տէֆն օլունմուշ
տըր :

Խրիսթիանլըզա գարշը օլան հիսի հա-
զարէթինի կէօթէրմէք իչիւն էմը էյլէտի
քի վէֆաթընտա մէզարընը դայէթ միւհքէմ
եափարազ տէմիր չէնպէրլէր իլէ լապթ էտիլ-
միշ իրի թաշլար իլէ գափատսընլար : Պու
մէզարըն իւզէրինէ մէրգումէնին շու քիւս-
թախ իտտիասը հէքք էտիլմիշ իտի.— Պու
մէզար ասլա էպէտէն իխլալ էտիլմէյէճէք :

Կիւնիւն պիրինտէ պիր աղաճտան ըիւզ-
կեար վէ եախօտ պիր գուշ վասըթասը իլէ
կէթիլիլէն պիր թօխում մէզարըն չաթլազլա-
րընըն պիրի արասընա տիւշտիւ վէ չապու-
ճազ ֆիլիզլէնէրէք պէօյիւմէյէ պաշլատը :
Պունուն իւզէրինէ գանն էտէրսին թապիաթ
պու մաղրուր տինսիգի իսթիհա էյլէտի վէ
ֆիտան քէնտի նազիք քէօքլէրինի ճէսիմ
թաշլարըն ալթընա սալարազ անլէրի եափաշ-
ճա եէրլէրինտէն գալտըրտը : Մէզարըն միւհը-
լէնմէսինէ տէօրթ նէսլլէր միւրուր էթմէզ-
տէն Ալլահա իճրա էթմէսի իչիւն էտիլէն
շու քիւսթախ իտտիայը, Ալլահ քիւշիւք պիր
թօխում վասիթասը իլէ եափմըշ իտի :

Ինկիլիզճէտէն թէրճէմէ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Հոգեւոր գործը Արտէշի նախնական մէջ.

Արտէշի նախնական մէջ կան բաւական թիւով հայեր, որոնք, ցրուած են դրեթէ 30 ի մօտ զանազան գիւղ ու քաղաքներու մէջ. կարգ մը տեղեր մեծամասնութիւն կը կազմեն որբուհիներ եւ որբեւայրիներ, որոնք կ'աշխատին մետաքսի գործարաններու մէջ :

Ասոնց մէջ ամէնաբախտաւորը եղած է — հոգեւոր տեսակէտով — ֆօն տ'Օպընաս (Pont d'Aubenass) ըստած գիւղը ուր մօտ երկու տարի է աղօթաժողովներ տեղի կ'ունենան : Գործարանատէրերը սիրով կը տրամադրեն ընդարձակ սրահներ, ուր տեղի կ'ունենան մեր հոգեւոր ժողովները. հիմա նոր եւ ընդարձակ սրահ մը տրամադրուած է Mr. Archamband ի կողմէ ուր պիտի կրնանք աւելի ազատ կերպով մեր հոգեւոր ժողովները ընել :

Նիւթապէս ամէն բան կորսնցնող մեր ժողովուրդը որքա՛ն պէտք ունի հոգեւոր մխիթարութեան, եւ այս մասին գործողները եւ միջոցները որքա՛ն քիչ են. ժողովուրդը տակաւին իր նախնիքներուն հաւատքը կորսնցուցած չէ եւ սիրով ու կարօտով կը փափաքի Աստուծոյ խօսքովը մխիթարուի :

Արդեօք քանի քանիներ կան այս տեղերը որոնք մեզքի այս ընդարձակ ուկիւստին մէջ շուարած ու անմխիթար կ'սպասեն Աւետարանի Բարի Լուրին, Յիսուս Քրիստոսով ձրի վերկութեան անոյշ պատգամին իրենց հասնելու :

Եղբայրս, քո՛յրս չենք կրնար բոլորին հասնիլ, գոնէ կրնանք աղօթել ու օգնել :

Փօն տ'Օպընայի մէջ ունինք Կիրակի առաւօտ պաշտամունք մը, որուն ներկայ կ'ըլլան մօտ 120—150 հոգի :

Կիրակնօրեայ դպրոց մը 26 աշակերտ աշակերտուհիներով, որոնց նաեւ շաբթուայ մէջ հայերէնի դասեր կը տրուին. ցաւալի է որ կարգ մը ծնողներ փոխանակ իրենց զաւակները Աստուծապաշտութեան վարժեցնելու, կը նախընտրեն փողոցի կեանքը :

Կիրակի եւ Հինգշաբթի երեկոներ աղօթաժողովներ տեղի կ'ունենան, ուր ներկայ կ'ըլլան մօտ 50-60 հոգի :

Նոյնպէս կայ Չորեքշաբթի օրեր կանանց միութեան յատուկ ժողով մը, ներկայ կ'ըլլան 25-30 տիկիներ :

Հոս կայ նաեւ երիտասարդ աղջկանց յատուկ ընկերութիւն մը, որոնք Երեքշաբթի երեկոյ միաբանական ժողով մը կ'ունենան :

Փօնտէն մօտ հինգ քիւլմէթր հեռու Վալս Լէ - Պէն ըստած տեղը Կիրակի կէս օրէ վերջ ժո-

ղով մը տեղի կ'ունենայ եւ Չորեքշաբթի օրն ալ աղօթաժողով մը :

Շրջակայքը դժոխող գիւղ եւ քաղաքները աստին աստին այցելելով հոգեւորները քաջալերել եւ ժողովուրդին մէջի հաւատքի լոյսը արծարծել մեր փափաքը ու ջանքն է : Շատ տեղեր կարելի չ'ըլլար ժողովներ ընել, քանի որ ժամանակ չեն ունենար. այդպիսի տեղեր մասնաւոր խօսակցութիւններով եւ հոգեւոր թերթիկներ ցրուելով, հաւատքով կը թողունք որ Տէրօջը Հոգին գործէ եւ հոգիները արթնցնէ :

Կարգ մը տեղեր, հոգեւոր եղբայր եւ քոյրեր նուիրուած են Տէրօջը գործին, որոնք իրենց հանգիստի ժամերուն մէջ կը գործեն Փրկչին փառքին համար եւ Տէրը կը գործէ իրենց միջոցաւ :

Ո՛հ, ինչ բերկրանք է ըլլալ ազատարար,

Արեամբ գնուած հոգիներու անհամար.

Ո՛հ, ինչ շքեղ է երբ հիւրերու թիւն լեցուի,

Եւ Արքային մեծ հարսանիքն սկսի :

Եղբայր, քոյրեր, գործենք միասին,

Միշտ նոր հոգի մ'ալ բերենք Տէր Յիսուսին :

Ահա աղօթքի նիւթ մը Աստուծոյ զաւակներուն. — Արտէշը : Հունձքը խիստ շատ, մշակները շատ քիչ ու տկար :

Ա. Օ. ՓԱՓԱԶԱՆ

Հասցէ.—

Maison Teyssier

Pont d'Aubenass (Ardeche)

ՄԵՐ ԲՈՎԸ ՊԱՏՐԱՍՏ ԿԱՆ.—

Ս. Գիրքեր հայերէն լեզուով ամէն մեծութեամբ հասարակ եւ ոսկեղօծ :

Ս. Գիրքեր հայաստան թուրքերէն իտալացիներէ մանր : Հոգեւոր երգարան, ձայնագրուած եւ գրպանի հասարակ եւ ոսկեղօծ :

Քրիստիանոսի ճամբորդութիւնը, հայերէն եւ հայաստան թուրքերէն :

Ս. Գրոց բառարան :

Ս. Գրոց աշակերտին գիրքը :

Նոր Կտակարանի մեկնութիւն :

Կան նաեւ ամէն տեսակ հոգեւոր գրքեր. Օր. Տիտոս,

Երէց Հէթի կենսագրութիւնը, Խաչ տանող :

Մտածութիւնք սօնական օրերու :

Սատու Սուրտար Մինկէ եւալլէ :

Որ գիրքն որ կ'ուզէք, հաճեցէք գրել, առ

Gulchan Badakian

c/o Redaction Panpère

29, Rue Fauchier, Marseille

Le Gérant : PASTEUR KALTENBACH

Տպար. Ա. Երեցեան, 40, Բիւ տէ Տօմիսթէն - Մարտէլլ